ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ը ՃԱՊՈՆԻԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հրավիրող կողմ՝ «JICA» (Ճապոնիայի կառավարության միջազգային համագործակցության գործակալություն**)**
Գործուղման նպատակը՝ վերապատրաստում, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործում

Ս/թ նոյեմբերի 19-ից դեկտեմբերի 6-ը Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնակատար Ռուզան Գրիգորի Հարությունյանը Ճապոնիայում մասնակցել է «JICA» (Ճապոնիայի կառավարության միջազգային համագործակցության գործակալություն) կազմակերպության կողմից Ճապոնիայի Տոտորի քաղաքի համալսարանում՝ նույն համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ կազմակերպված վերապատրաստման դասընթացի՝ «Չոր և կիսաչոր շրջանների կայուն գյուղատնտեսության համար հողային և ջրային ռեսուրսների կառավարում» թեմայի շրջանակներում:

Դասընթացներում ներգրավված էր 7 մասնակից 6 երկրից՝ Հայաստան, Ղազախստան, Թուրքմենիա, Տաջիկստան, Ուզբեկստան և Ադրբեջան:

Երկշաբաթյա կտրվածքով կազմակերպվել են խտացված դասընթացներ՝ «Ջրի տնտեսում դաշտերում՝ ոռոգման շրջանի ընթացքում», «Ջրի տնտեսում ոռոգման համակարգերի շահագործման ընթացքում», «Հիդրոլոգիական ուսումնասիրությունների համար նախատեսված տեխնոլոգիաներ», «Յոնեգավա. մելիորացված հողատարածքների ռեգիոն» գլխավոր թեմաների շուրջ, որոնց ընթացքում արծարծվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ Ճապոնիայի ոռոգման համակարգերի նախագծումը, ջրի տնտեսում և հողի աղակալման նվազագույն աստիճանի ապահովման նպատակով իրականացվող ոչ խորը դրենաժ, դրենաժային համակարգերի տեսակներ, ոռոգման համակարգերի կառավարման համար անհրաժեշտ արդյունավետության գնահատման մեթոդներ, աղային շերտերի առաջացման պատճառները և դրանց դեմ պայքարի միջոցները, խողովակաշարերի նախագծման և կառավարման մեթոդները, ինչպես նաև՝ ջրի կորուստների ուսումնասիրություններ, հոսանքի արագության, ծավալի, խորության և այլ

պարամետրերի չափման համար նախատեսված տարբեր ժամանակակից բանաձևերի և սարքավորումների ուսումնասիրություն, հողի խոնավության չափման և գնահատման մոնիթորինգ և այլն:

Դասընթացներն ուղեկցվել են լաբորատոր փորձերով, գործնական պարապմունքներով, տարբեր ջրամբարներ իրականացված այցելություններով և պարբերական թեստավորմամբ:

Երկշաբաթյա ինտենսիվ դասընթացների ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ «JICA» կազմակերպության փոխտնօրենի, Ճապոնիայի Տոտորի քաղաքի համալսարանի ռեկտորի, ռեկտորի տեղակալների, դեկանների և տարբեր դասախոսների հետ:

Դասընթացների ավարտին կազմակերպված թեստավորման արդյունքների հիման վրա շնորհվել է համապատասխան վկայական (առդիր՝ 1 էջ):

Փակման հանդիսավոր արարողությանը մասնակիցների կողմից շնորհակալական ամփոփիչ խոսքի առավելությունը տրվել է Հայաստանի ներկայացուցչին:

Դասընթացների նյութերը կնպաստեն Հայաստանում Ջրային կոմիտեի և համապատասխան կառույցների կողմից ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը, ջրային ռեսուրսների տնտեսման նոր մեթոդների կիրառմանը և ոլորտում հնարավոր տեխնոլոգիական բարեփոխումների իրականացմանը՝ Ճապոնիայի փորձի օրինակով:

Certificate

This is to certify that

Ms. HARUTYUNYAN Ruzan

has successfully completed the Knowledge Co-Creation Program (Group and Region Focus) on Appropriate Management of Land and Water Resources for Sustainable Agriculture in Arid / Semi-arid Regions (B) at Tottori University

from November 20 , 2019 to December 7 , 2019

organized by the Japan International Cooperation Agency under the International Cooperation Program of the Government of Japan.

SHINICHI KITAOKA
PRESIDENT
JAPAN INTERNATIONAL COOPERATION AGENCY
JAPAN

Date: December 6, 2019